Սեռական ոլորտին պատկանող ատելության խոսքին վերաբերող ֆոկուս-խմբի աշխատանքների հաշվետվություն[1]*

29.04.2019, ք. Երևան

Մասնակիցներ՝ *ԼԳԲՏ համայնքի երիտասարդ ներկայացուցիչներ, փորձագետներ:*

Հերթական քննարկումը տեղի ունեցավ ֆոկուս խմբում, որը սեռական ոլորտում ատելության խոսքի դեպքերն էին: Ֆոկուս խմբի մասնակիցների մեծամասնությունը նշում էին, որ իրենք ատելության խոսքի կամ ատելության հանդիպել են ավելի շատ իրական կյանքում, քան համացանցում: Չնայած նրան, որ անդամներից մեկը այդքան էլ ակտիվ չէ ֆեյսբուքում, սակայն մի անգամ հավասարության (բազմագույն) դրոշն է տեղադրել ֆեյսբուքյան իր էջում, ինչը պատճառ է դարձել իր հանդեպ ատելության խոսքի Բրյուսովի համալսարանում՝ այն բուհում, ուր նա սովորում է: Օրինակ, դասախոսներից մեկը, ով պահպանողական գաղափարներ է ունեցել, նշել է, որ «այդ ջհուդների տարածած գաղափարախոսությունը» չպետք է ներթափանցի Հայաստան: Սակայն եղել են դասախոսներ, ովքեր պաշտպանել են իրեն:

Մյուս մասնակիցը նշեց, որ իրեն անընդհատ ճնշել են ասելով «ղզիկ» և այլ արտահայտություններ: Սակայն գլխավոր միջադեպը տեղի է ունեցել, երբ դասղեկը լրատվական կայքերից մեկում նյութ է տեղադրել, որ համասեռամոլ երեխան դպրոցում սեռական հարաբերություններ է ունեցել այլ տղայի հետ: Այնուհետև երբ ծնողը մասնակցել է ժողովին երկրորդ հոդվածն է լույս տեսել: Այնուամենայնիվ այդ դասատուն ազատվել է աշխատանքից այս դեպքերից հետո: Այնուհետև բռնության դեպքեր են եղել դպրոցում երեխաների կողմից, սակայն ըստ մասնակցի բոլորը պատասխանները ստանում են և ինքը ագրեսիվությամբ պատասխանում է բոլորին: Նաև նշեց, որ վերջին դեպքը Ազգային ժողովում տրանսգենդերի ելույթից հետո տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ է եղել, երբ մի անծանոթ փորձել է հարձակվել իրենց վրա, սակայն գազային բալոնով կարողացել են պաշտպանվել:

Հաջորդ մասնակիցը նշեց, որ պարզապես հետևում է համացանցում տեղի ունեցող իրադարձություններին և այդքան էլ ակտիվ չէ: Նա նշեց, որ Ֆեյսբուքում ձայն չի հանում, սակայն եթե այդ ամենը տեղի ունենա իրական կյանքում, ապա անպայման կարձագանքի: Փորձում է մարդկանց բացատրել, որ մարդիկ իրավունք չունեն այդպիսի կարծիք ունենալ այն մարդկանց մասին, ում չեն ճանաչում:

---

[1] Այս ֆոկուս խմբի մասնակիցները չցանկացան լուսանկարահանվել՝ սեփական ինքնությունը որեւթ կերպ չբացահայտելու նպատակով:

Հաջորդ մասնակից աղջիկը ծաղրի է ենթարկվել, երբ բոլորը իմացել են, որ դպրոցում սեռական հարաբերություն է ունեցել տղայի հետ և 2 տարի շարունակ աղջիկների կողմից ենթարկվել է ծաղրի, տղաների կողմից շվոցների, անհարգալից վերաբերմունքի, նույնիսկ աղջիկների կողմից բռնության դեպքեր են գրանցվել: Եվ նա պատճառներից նշում է այն, որ ասել են, թե դու կույս չես, ուրեմն լավ աղջիկ չես ու բոլորի հետ ման ես գալիս:

Մյուս մասնակիցը նշեց, որ ինքը տղա գեյ է եւ իր հետ կիսվում են շատ համադասարանցի աղջիկներ, ովքեր պատմել են, որ իրենք էլ են տղաների հետ սեռական հարաբերություն ունեցել, բայց քանի որ նրանց ընկերները «հարգված» տղերք են՝ այդ իսկ պատճառով կողքից ոչ ոք չի համարձակվում ձայն հանել այդ մասին:

Նախորդ աղջիկը նաեւ պատմեց, որ իր նախկին ընկերը ասել է, որ «պետք է վառեն քո նման մարդկանց, դուք տեղ չունեք այս երկրում»: Հանդիպել է նաև մի քանի դեպքերի, որից առաջինը եղել է երթուղային գազելի մեջ: Մի մարդ, ով տեսել է ԼԳԲՏ համայնքի նշանը իր հեռախոսի վրա, հետապնդել է աղջկան ու ասել է, որ «նորմալ աղջիկ ես, քեզ ինչ ա եղել, որ սրանց հետ ես կապվել», հետո փորձել է խոչընդոտել աղջկա ճանապարհը, սակայն նա գոռացել է, որից հետո հարևաններն են դուրս եկել և նա կարողացել է փախչել այդ անձնավորությունից: Մեկ այլ դեպքում՝ իրենք ընկերներով քայլել են երկու տրանսի հետ և երկու տղա արագացնելով քայլելը արմունկով խփում է իրենց, որից հետո սկսվում է ծեծկռտուք, այնուհետև պապիկները շներին են բաց թողնում, ու հետո միանում են մարդիկ ու ոստիկանություն են զանգում: Ու նաև նշեց, որ իր շրջապատում տղերքը գտնում են, որ տղերքը չպետք է տղերքի հետ լինեն, բայց աղջիկների՝ իրար հետ լինելուն հավանության են արժանացնում:

Մյուս մասնակիցը նշեց, որ Շուռնուխից վերադառնալիս, ոստիկաններից մեկը աղջիկներից մեկին ասել է, «խելքդ տեղն ա, տեսքդ տեղնա, դու էս ..յոթ-ի հետ ինչ կապ ունես»:
Նրանք նշեցին, որ օրենքի ներկայացուցիչները շատ հաճախ իրենք են բռնություն կիրառում գեյերի նկատմամբ, ու մասնակիցներից մեկը, ով գեյ էլ չէ, բայց ազատ քայլվածքի պատճառով ոստիկանները միշտ մոտենում են ու փորձում են ստուգել գրպանները, սակայն երբ հարց է հնչեցնում, թե ինչու աղջիկներին չեք ստուգում, պատասխանում են, որ դա բարոյական չէ:

Մասնակիցներից մեկը կարծիք հայտնեց, որ ատելության դրսևորումը վախից է գալիս: Եվ տվյալ մարդը գտնվելով «քառակուսի» վիճակում չի կարողանում հասկանալ, որ աշխարհում գոյություն ունի բազմազանություն և տվյալ մարդիկ վախենում են ընդառաջ գնալ այդ բազմազանությանը: Նա նշեց, որ շատ մարդկանց է ճանաչում, ովքեր վախենում են շփվել գեյերի, կամ այդ համայնքի այլ ներկայացուցիչների հետ, քանի որ մտածում են, որ կարող է այդ մարդկանց հավանեն: Եվ նաև նշեց, որ

աշխարհում կան նաև վատ մարդիկ, ովքեր միտումնավոր շահարկում են այս թեման՝ ինքնահաստատման կամ այլ նպատակներով։

Մասնակիցներից մեկը պատմեց, որ հասարակագիտություն առարկա անցնելու ժամանակ իրենք անցնում էին բարոյականությունը որպես նորմ և այնտեղ նշվում է, որ «հասարակությունը միատարր բջիջ է, որը ներկայացնում է իր պահանջները» և ուսուցիչը բերելով նույնասեռականների օրինակը, նշեց, որ մեր հասարակությունում չկան այդպիսի մարդիկ, և մենք ասել ենք ոչ այդ մարդկանց։

Հետաքրքիր էր նաև իմանալ, թե հարազատները ինչպես են արձագանքել, և արդյոք ԼԳԲՏ երիտասարդների հանդեպ ատելության խոսք դրսևորվել է հենց ծնողների կողմից։ Մասնակիցներից գեյերից մեկը նշեց, որ ծնողները իմացել են 1 տարի առաջ և իմանալուց հետո կռիվ է սկսվել տանը։ Նշեց, որ մինչև իմանալը ծնողները բավական տոլերանտ են եղել, սակայն երբ իմացել են՝ հայրը բավական ագրեսիվ է արձագանքել և ցանկացել են զոռով ամուսնացնել մի աղջկա հետ։ Նաև նկատեց, որ մի քանի օր անց ծնողները ձևացրել են, թե ոչ մի բան չի եղել։ Սկզբում ճնշումը բավական մեծ է եղել, իսկ այսօր ուղղակի չեն քննարկում այդ հարցը։

Մյուս մասնակիցը նշեց, որ դեռ պետք է նախապատրաստի ծնողներին։ Եվ 10-րդ դասարանում տուն գալով ծնողներին ասել է, որ ուսուցիչը հարցրել է երեխաներին, որ ճշտեն ծնողների կարծիքը նույնասեռականների մասին։ Հարցաթերթիկ է կազմել և փորձել է այդկերպ իմանալ ծնողների դիրքորոշումը։ Եվ հայրը, ով ազատամարտիկ է եղել միանգամից վատ է արտահայտվել։ Նշել է, որ այդ մարդկանց պետք է ուղարկել սահման, որպեսզի նրանք իմանան, թե որն է իսկական «տղան»։ Հատկապես նշելով, որ «դրանց» նմանները պետք է թուրքի բերան գնան, որ հասկանան դժվարությունները։ Այնուհետև երգեր է դրել, որպեսզի անուղղակի կերպով պատրաստի ծնողներին։ Ըստ նրա, հայրը հավանել է այդ երգերը սակայն չի իմացել, որ երգը կատարողը նույնասեռական է։ Շուռնուխում տեղի ունեցած դեպքից հետո մայրն է իմացել այդ մասին։ Ընդունել է այդ փաստը շատ նորմալ։ Կարելի է ասել, որ հայրը ուղղակիորեն դեռևս չգիտի ճշմարտությունը, սակայն ըստ մասնակցի նրա քայլերից և պահվածքից կարծում է, որ հայրը պետք է, որ հասկացած լինի թե ինչ է տեղի ունենում։ Եվ ուրախությամբ մեր մասնակիցը նշում է, որ շուտով պատրաստվում է իր գեյ ընկերներին հրավիրել իրենց տուն ճաշկերույթի։ Կարծում է, որ այդքանը իմանալով իր ծնողները շատ նորմալ են ընդունում այդ հանգամանքը, և պատրաստ են հարգել իրենց որդու ընտրությունը։

Մյուս մասնակիցը նշեց, որ նույն սոցիալական հարցումն է կազմակերպել տանը։ Նաև նշեց, որ ծնողները բաժանված են։ Եվ մի օր, երբ ընկերն է զանգում մայրն է վերցնում, և այդ տղան է ասել է «կյանքս ուր ես»։ Այնուհետև մայրը ստիպել է որդուն զանգահարել այդ տղային և բարձրախոսով խոսել իր ներկայությամբ։ Դրանից հետո մայրը իմացել է և ամբողջ օրը տուն չի վերադարձել։ Հետո, երբ վերադարձել է որդին հարցրել է թե որտեղ է եղել, մայրը պատասխանել է, որ ամբողջ գիշեր անցկացրել է ընկերուհիների

հետ, խմել են, և որ ամենակարևորն է, նույնիսկ փորձել է ինքնասպանության դիմել։ Ֆոկուս խմբի մասնակիցը նշում է, որ այս ամենը ցնցել է իրեն և նա չէր կարող նույն կերպ շարունակել։ Դրանից հետո միանգամից մի քանի տարի սահմանափակել է իր շփումները ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչների հետ և այդ ընթացքում, նույնիսկ ընկերուհի է ունեցել, սակայն մի քանի տարի ընկերություն անելուց հետո բաժանվել է այդ աղջկանից և հիասթափված վիճակում հասկացել է, որ, այնուամենայնիվ դա իրենը չէ, որ իրեն ոչ թե աղջիկներն են դուր գալիս, այլ տղաները, և այլևս չի ցանկացել գաղտնի պահել այս ամենը կամ ստիպել սեփական ներաշխարհին հակառակ դիրքորոշումն ունենալ։ Վերջիվերջո հասկացել է, որ ինքն իրեն չի կարող խաբել և վերադարձել է իր իրական ինքնությանը՝ այս ամենի մասին ասելով մորը։ Մայրը ընդունել է որդու ընտրությունը, իսկ հայրը որի հետ մինչ այս դեպքերն էլ մոտ չի եղել, քանի որ ծնողները բաժանված են եղել, մինչև այսօր էլ չգիտի այս մասին և ինքն էլ չի ցանկանում խոսել հոր հետ այս թեմայով։

Հաջորդ մասնակիցը նշեց, որ ծնողները նույնպես բաժանված են, և մայրը երբ իմացել է, վախեցել է, թե ինչպես է երեխա ունենալու, քանի որ շատ հայրենասեր է, սակայն իրենց ընտանիքում ատելության խոսք չի եղել և ամեն ինչ հարթ է անցել։

Մասնակիցը նշում է, որ իր մայրը երկար տարիներ աշխատել է արտերկրում։ Աշխատելով թե ԱՊՀ տարածքում, թե մերձբալթյան երկրներում, և թե եվրոպական երկրներում մայրը միևնույն է բավական հայրենասեր անձնավորություն է և միակ խնդիրը, որ տեսնում է իր աղջկա ընտրության մեջ կայանում է նրանում, որ աղջկա ճակատագիրը անորոշ է։ Նրա մտավախությունների թվում են, թե ինչպե՞ս պետք է աղջիկը երեխա ունենա։ Եվ ինչպես նշում է մեր մասնակիցը՝ մայրը, իհարկե, տեղյակ չէ արհեստական բեղմնավորման ժամանակակից մեթոդներին, այդ իսկ պատճառով այդօրինակ արձագանք է ունեցել աղջկա ընտրության հարցում։

Նաև նշում է, որ նույնիսկ իր մորաքույրը, ով Եհովայի վկա է և նրանց համար բավական շատ կանոններ կան, որոնք անընդունելի են դարձնում նմանօրինակ որոշումը, միևնույն է, ընդունել է իր որոշումը և հարգանքով մոտեցել դրան։ Մասնակիցը նշում է, որ երկարատև քննարկումների և զրույցների արդյունքում ինքը կարողացել է ընտանիքի անդամներին բերել այն գիտակցության, որ իր կայացրած որոշումը ոչ ամոթ է, ոչ էլ անընդունելի, քանի որ դա ինքնանպատակ չէ, այլ եղել է ի ծնե իր ինքնությունը, իր օրգանական կերպը։

Մեր մասնակիցը նաև նշում է, որ բիսեքսուալ լինելով հանդերձ ատելության խոսք է նկատել նաև գեյերի և լեսբիների կողմից իր հանդեպ, քանի որ նրանք իրեն չկողմնորոշված են համարում և ինչ-որ տեղ նախանձով են վերաբերում։ Այսպիսով նշում է, որ այս ամենը համատարած բնույթ է կրում և այնպես չէ, որ նույնասեռականների միջև ատելություն չկա։

Հաջորդ մասնակիցը նշեց, որ սոցիալական ցանցում շատ ակտիվ է ու շատ է հանդիպել ատելության խոսքի։ Չի արձագանքում, որ իր վրա չգա այդ ամեն ինչը, սակայն շատ են

իրեն նշել, որ նկարները տարբերվող են, ոճային են, ինքը լավն է, բայց վատ բան չեն գրում։ Իրական կյանքում շատ է լինում այդպիսի դեպքեր։ Նա նշում է, որ մշտապես երբ ինքը միայնակ է լինում այդպիսի խնդիրների չի բախվում անցորդների հետ, սակայն, երբ ընկերներով են լինում՝ միանգամից դառնում են թիրախ անցորդների համար։ Ընկերներից մեկին է կորցրել, երբ 3-ով գնալուց են եղել հաց ուտելու մեկը հետևից կրակայրիչը պայթեցրել է ոտքերի տակ ու ով որ մոտ է եղել կրակայրիչին, շոկի մեջ է հայտնվել։ Շատ վախեցել է։ Այնուհետև փորձել են հասնել իրենց հետևից, որպեսզի հարվածեն, սակայն բոլորը փախել են և կարողացել են անվնաս դուրս գալ այդ իրադրությունից։ Ինքը գոռացել է ընկերների վրա, կռվել են ու դրանից հետո ընկերները չեն ցանկացել իր հետ շփվել։ Այդ օրվանից այլևս իրար հետ չեն խոսել և ընկերությունը դադարել է, չնայած նրան, որ մեր մասնակիցը մինչև օրս էլ փորձում է վերականգնել ընկերների հետ հարաբերությունները։

Բայց նշում է, որ իրեն չի կարելի նեղացնել ու ով որ արել է այդպիսի բան շատ վատ է անդրադարձել այդ մարդու վրա։ Փողոցում իրեն է մոտեցել մի տղա հայհոյել է, այնուհետև փոձել է հարվածել, բայց քանի որ մեր մասնակիցը նշում է, որ ինքը բավական արագ է վազում, կարողացել է փախչել այդտեղից և հիշել է այդ տղայի դեմքը։ Օրերից մի օր ընդունվել են նույն տեղը գործի ու ինքը հասել է նրան, որ այդ տղան կորցրել է աշխատանքը։ Նշում է, որ չէր կարողացել ներել։ Այնպիսի բան է սարքել այդ տղայի գլխին, որ տնօրենը նույնիսկ ուզեցել է այդ տղային խփի։ Այդ տղան այդպես էլ չի ճանաչել իրեն։ Մի դեպք էլ տեղի է ունեցել այգում, երբ ուզեցել են հարձակվել, բայց առանց պատճառ։ Ոչ մի բան չեն ասել ու ուզեցել են ուղղակի խփել ու երբ փախել է կանայք օգնել են։ Երբ որ մենակ է լինում նման բան չի լինում, երբ երկու շաբաթ առաջ գնում էին տուն՝ ընկերոջ հետ, ասել են «սա աղջիկա, թե տղա»։ Դեպքը տեղի է ունեցել կասկադի մոտակայքում։ Մի քանի հոգով փորձել են հետապնդել իրենց։ Ընկերոջ հետ միանգամից գլխի են ընկել և մտել են ռեստորան։ Քանի որ, ինչպես միշտ է տեղի ունենում, ըստ մասնակցի, այդ հետապնդողները փող չունեին, իսկ իրենք ունեին, մտնում են ռեստորան և բավական շատ ուտելիքներ են պատվիրում, քանի որ բավական մեծ հերթ է եղել և եթե շատ թանկանոց ուտելիքները չպատվիրեին իրենց ուղղակի ներս չէին թողնի։ Ահագին երկար սպասել են ռեստորանում մինչև այդ երեքը գնացել են։ Նշում է, որ այդ երիտասարդները մոտավորապես 20 տարեկան էին և, ինչպես վայել է նմանօրինակ մարդկանց (այդպես է կարծում մասնակիցը), հագնված էին բավական անճաշակ։ Ատելության խոսքի եւ խտրական վերաբերմունքի շատ է ականատես եղել, սակայն ինքը միշտ կարողանում է խուսափել իր հանդեպ ֆիզիկական բռնությունից։

Երբ հարցրեցինք մասնակիցներին, թե ինչու ոստիկաններին չեն դիմում, երբ խնդրի են ականատես լինում, մասնակիցներից մեկը նշեց, որ իրենք չեն վստահում ոստիկաններին, քանի որ մտածում են ավելի շատ քաշքշոցի մեջ կընկնեն։ Ըստ մասնակցի ոստիկանները նույնպես պատրաստ չեն ընդունել իրենց այնպիսին, ինչպիսին իրենք կան և ոստիկանության դիմելուց հետո իրենք բախվում են մի շարք

խնդիրների նաև ոստիկանների հետ, և ավելորդ քաշքշուքից խուսափելու համար զերծ են մնում ոստիկաններին դիմելուց։ Մասնակիցը նշեց, որ այդպիսի դեպքերից հետո ինքն իր մոտ գազային բալոն է պահում, որով երբ պետք է լինում դիմում է ինքնապաշտպանության և որ միայնակ կարողանում է պաշտպանել սեփական անձը։ Ընտանիքի հետ կապված խնդիր չի ունեցել։ Նույնիսկ նույնասեռական հարևաններ են ունեցել ու ընտանիքով շփվել են նրանց հետ։ Նշում է, որ մի օր հայրը այդ մարդկանց անգամ հրավիրել է իրենց տուն ու ընեցիքին էլ ասել է, թե նայե՛ք՝ ամուսնացած են։

Խանութում դեպք է եղել, որտեղ մայրն է աշխատում։ Մորը մի տղա ասել է, թե «սրանց չպիտի սպասարկես, իրանց նման ոչնչությունը չկան էդքան»։ Մայրը ջղայնացել է ու բացատրել է, որ կապ չունի թե մարդը ինչպիսի ընտրություն է կատարել։ Կարևորը, որ մարդ է և ունակ է հասկանալու։ Կարելի է ուղղակի լավ վերաբերմունքով փորձել թշնամանք չտարածել մեկմեկու հանդեպ և հասկանալ դիմացինի ընտրությունը։ Եվ իհարկե չի թողել, որ նեղացնեն այդ տղաներին և առաջինը սպասարկել է հենց նրանց։ Ինչպես նաև մի օր հանկարծակի մեր մասնակիցը տեսել է ֆեյսբուքում, որ ընկերոջ նկարների տակ վատ քոմենթներ են գրում և միամիտ տեսնում է, որ մայրը նույնպես գրել է և պաշտպանել իր ընկերոջը։

Գնացել է տուն և ասել է մորը, որ ճանաչում է այն տղային ում ինքը պաշտպանել է, մայրը ուրախացել է և նշել է, որ այդ մարդկանց պետք է հարգել, ոչ թե անընդհատ քարկոծել։

Լուծումներից խոսելով մեր մասնակիցներից մեկն ընդգծում է, որ մարդիկ ոչ-բավարար տեղեկատվություն ունեն, և մինչև չշփվես մարդու հետ՝ չես կարող կարծիք կազմել։ Նա գտնում է, որ բացի սեռականությունից այդ մարդը բազմաթիվ այլ հատկանիշներ, արժեքներ ունի։ Նա կարծում է, որ պետք է շփման եզրեր գտնել այնպիսի մարդկանց հետ, ովքեր կապացուցեն բոլորին, որ նույնասեռականի միակ արժանիքը այդպիսին լինելը չէ։ Նաև կարծում է, որ այս խտրական վերաբերմունքը ոչ թե միայն ԼԳԲՏ համայնքի հանդեպ է, այլ նույնկերպ նաեւ այլ խոցելի խմբերի հանդեպ, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող մարդիկ նույնպես ենթարկվում են տարատեսակ խտրական վերաբերմունքի։

Նշվեց նաև մեդիայի խնդրահարույց մակարդակը, պրոֆեսիոնալիզմի եւ լայնախոհության պակասը։ Մեդիայով ոչ մի հաղորդում չեն ցույց տալիս, որը կարող է պարունակել ճիշտ տեղեկատվություն այս համայնքի ներկայացուցիչների մասին և հասարակության մոտ կարծիքի ձևավորումը այսպիսով հետաձգվում է։

Այնուհետև դժգոհություն հայտնվեց այսօրվա կառավարության մասին, նշելով, որ եթե վարչապետի պահվածքը ինքնին ատելություն է պարունակում՝ այդպիսի մարդը չի կարող պայքարել ատելության դեմ։ Մարդ պետք է սեփական օրինակով պայքարի ինչ-որ արատավոր երևույթի դեմ։ Եվ մասնակիցներից մեկը կարծում է, որ այս խնդիրը երբեք էլ չի լուծվի, քանի որ ամբողջ աշխարհը այսօր ատելության դեմ պայքար է տանում, սակայն ատելությունը միայն ավելանում է։

Մյուս մասնակիցը ավելի լավատես էր, և նշեց, որ գրագետ ռազմավարությունների մշակման դեպքում կարելի է հասնել խնդրի լուծման և հասարակության միջև հանդուրժողականության հաստատման։

Կարծում է, որ կրթական ծրագրերում հստակ դասընթացներ լինեն սեռականության մասին և իհարկե հանրայնորեն պետք է քննադատվի բռնությունը, ատելության խոսքը և անհանդուրժողականությունը։ Եվ այդ պայքարը հանրային պետք է դարձնեն հայտնի մարդիկ, ովքեր պետք է իրենց կոչերով պայքարեն ատելության դեմ։

Կարծում են, որ պետք է թեկուզ փոքր քայլերով հասնել մեծ մասշտաբի խնդրի լուծմանը։